A. O. АРУТЮНЯН, *Кавказский фронт 1914—1917 гг.*, издательство «Айастан». Ереван, 1971, 415 էջ։

Պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Հարությունյանի մենագրությունը նվիրված է պատմագիտական խիստ կարևոր մի պրոբլեմի, որն իր ռազմադիվանագիտական առումով հարկ եղած չափով չի ուսումնասիրվել։ Մյուս կողմից, թեմայի առանձին հարցեր բուրժուական, առաջին հերթին թուրքական պատմագրության կողմից ենթարկվել են նենգափոխման և շարունակվում են նենգափոխվել։ Ուստի, սովետական պատմաբանները գեռևս կարևոր անելիքներ ունեն այդ թեմայի ուսումնասիրման բնագավառում, որպեսզի և՛ հարստացնեն տվյալ բնագավառի իրենց կատարածը, և՛ վճռական հակահարված տան պատմության կեղծարարներին։

Գրախոսվող աշխատությունը զգալի չափով լրացնում է այդ բնագավառում եղած բացը։ Այն ընդգրկում է բազմաթիվ պրոբլեմներ, սակայն մենք կանդրադառնանք միայն մի քանի ստավել կարևոր ու հանգուցային հարցերի։

Աշխատության անժխտելի արժանիքներից է աղբյուրագիտական հարուստ նյութը։ Հեղինակը հմտությամբ ընտրել է առավել փաստալից վավերագրերը և դրանք նպատակասլաց օգտագործել։

Հետաքրքրությամբ է ընթերցվում աշխատության «Ներածությունը», որտեղ քննվում է թեմային վերաբերող գրականությունը։ Համոզիչ են հեղինակի դիտողությունները ռազմական անվանի պատմաբան Ն. Գ. Կորսունի որոշ սխալների մասին։ Բարձր գնահատելով Կովկասյան ռազմաճակատի պատմության ուսումնասիրության ուղղությամբ նրա կատարած աշխատանքը, Ա. Հարությունյանը միաժամանակ ցույց է տալիս, որ Ն. Գ. Կորսունը իրավացի չէ պնդելով, թե ցարական Ռուսաստանը 1914 թ. պատրաստ էր պատերազմին և նրա համար նպաստավոր պայմաններ էին ստեղծվել հարձակվելու Թուրքիայի վրա։ Հեղինակը իրավացիորեն նկատում է, որ Ն. Գ. Կորսունը գերագնահատում է ցարիզմի դիվանագիտական պայքարի նշանակությունը Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու հարցում, ինչպես նաև պանիսլամիզմի գաղափարների պրոպագանդայի ազդեցությունը Կովկասի և Ռուսաստանի մահմեդական բնակչության շրջանում։

Գրախոսվող աշխատությունում արդարացիորեն քննադատվում է Ն. Գ. Կորսունի նաև այն պնդումը, թե հայերին Արևմտյան Հայաստանից արաբական անապատներ արտաքսելիս թուրքական իշխանությունները նրանց նկատմամբ ուշադիր և մեղմ էին (էջ 8—9)։ Մինչդեռ, իրականում, կատարվել է բոլորովին հակառակը։ Այդ ցույց տալու համար գրքում բերված են հետաքրքիր փաստեր։ Այսպես, օրինակ, 1915 թ. հուլիսի 7-ին Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը գերմանական կանցլեր Բետման-Գոլվեգին հաղորդել է, որ թուրքական կառավարությունը նպատակ է դրել ոչնչացնել Թուրքիայի հայ բնակչությանը։ Հեղինակը բերել է նաև հայկական շարդերի ոգևորիչ և կազմակերպիչ Թալեաթ բեյի տխրահռչակ հեռագիրն այդ ժամանակ Հալեպի նահանգապետ Ջեմալ փաշային՝ հայերի մասսայական կոտորած կազմակերպելու և դրան դիմադրողների հետ անողոք դատաստան տեսնելու մասին (էջ 9)։

Աշոտ Հարությունյանն անդրադառնում է բազմաթիվ բուրժուական պատմաբանների «ուսումնասիրություններին», ինչպես նաև Թուրքիայի այն ժամանակվա զինվորական ու քաղաքական գործիչների «հուշագրություններին» և մերկացնում Կովկասյան ռազմաճակատի և դրա հետ կապված մի շարք իրադարձությունների պատմությունը կեղծելու նրանց փորձերը։

Ինչպես հայտնի է, Կովկասյան ռազմաճակատում մարտական գործողություններն սկսվեցին 1914 թ. հոկտեմբերի 27-ին, երբ թուրքական ռազմածովային նավատորմը իր կազմում ունենալով գերմանական «Գեբեն» և «Բրեսլաու» ռազմանավերը, գերմանական ծովակալ Սուշոնի հրամանատարությամբ, ռմբակոծեց Սևաստոպոլը, Օդեսան, Նովորոսիյսկը և Թեոդոսիան։ Հոկտեմբերի 31-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային։ Բազմահարուստ փաստական նյութի, մեծ մասամբ արխիվային վավերագրերի հիման վրա գրախոսվող գրքի հեղինակը համոզիչ կերպով ցույց է տվել պատերազմի ժամանակ Գերմանիայից Թուրքիայի

ստացած օգնության տարբեր դրսևորումները, մինչև վերջ բացահայտել Անդրկովկասի, Մերձավոր արևելքի և Ռուսաստանի նկատմամբ Թուրքիայի և Գերմանիայի քաղաքականության նվաճողական էությունը։ Մերձավոր արևելքում ցարական Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունը չժխտելով հանդերձ, Ա. Հարությունյանն իրավացիորեն նկատում է, որ այն որոշ դեպքերում ստիպված էր հակահարված տալ իր շահերի նկատմամբ ոտնձգություններ կատարող մյուս տերություններին։

Կովկասյան ռազմաճակատի ցամաքային զորքերի գործողությունները (1914 թ. նոյեմբերից սկսած), տևում են մինչև 1917 թ. նոյեմբեր-դեկտեմբերը։ Ռազմաճակատի գիծը ձգվում էր Սև ծովից մինչև Իրան (մոտ 1500 կմ.)։ Գրախոսվող գրքում Կովկասյան ռազմաճակատի իրադարձությունները վերլուծվել են առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմության ընդհանուր ֆոնի վրա։ Հեղինակը հանգամանորեն է նկարագրում Կովկասյան ռազմաճակատի հիմնական ճակատամարտերը, ընթերցողին ծանոթացնելով յուրաքանչյուր ճակատամարտի նախօրյակին կողմերի ուժերի հարաբերակցությանը, նրանց հրամանատարությունների պլաններին, ռազմական գործողությունների ընթացքին, կրած կորուստներին և տվյալ գործողության ռազմաքաղաքական և դիվանագիտական հանրագումարներին։ Հատկապես հիմնավոր են նկարագրվել Սարիղամիշի, Ալաշկերտի և Էրզրումի ճակատամարտերը։ Մասնավորապես Սարիղամիշի ու Էրզրումի ճակատամարտերը նկարագրելիս ցույց է տրված ռուսական ռազմական արվեստը լեռնային պայմաններում։ Ա. Հարությունյանը օբյեկտիվորեն վեր է լուծում ռազմաճակատի առանձին հատվածներում ռուսական բանակի ունեցած առանձին անհաջողությունները, որոնք իրենց բացասական հետևանքներն ունեցան։ Սակայն, ընդհանուր առմամբ, ինչպես ճիշտ նկատում է հեղինակը «1914—1917 թթ. Կովկասյան ռուսական բանակը կատարեց իր հիմնական մարտական խնդիրը՝ փակելով թուրքերի ճանապարհը դեպի Կովկաս և գրավելով ստրատեգիական մի շարք կարևոր դիրքեր ու հենարաններ Մերձավոր և Միջին արևելքում» (էջ 377)։

Աշխատության մեջ միաժամանակ ցույց է տրված, որ Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի հաջողությունները ավելի էին սրում հակասությունները մի կողմից՝ Ռուսաստանի, մյուս կողմից՝ նրա դաշնակիցներ Անգլիայի ու Ֆրանսիայի միջև։ Նորահայտ արխիվային վավերագրերի հիման վրա հեղինակը ցույց է տալիս, որ պատերազմի ժամանակ գրավված Արևմտյան Հայաստանի տարածքում ցարիզմի վարած քաղաքականությունը նրա նախապատերազմյան գաղութային քաղաքականության շարունակությունն էր, որով Արևմտյան Հայաստանը դիտվում էր որպես Ռուսական կայսրության անբաժանելի մասը։ Նրա վարչական-կառավարչական կառուցվածքի և ներքին օրենքների մասին բոլոր նախագծերը բխում էին դրանից։ Գրքում միաժամանակ քննադատված է գրականության մեջ տեղ գտած այն սխալ տեսակետը, ըստ որի ցարիզմը նպատակ էր հետապնդում ունենալ «Հայաստան առանց հայերի»։ Հեղինակը իրավացիորեն նշում է, որ դա ցարական առանձին գործիչների ձգտումն էր և ոչ կառավարության քաղաքականության էությունը։ «Նվաճված մարզերի նկատմամբ ցարիզմի քաղաքականությունը,— գրում է Աշոտ Հարությունյանը,— չնայած իր բացահայտ գաղութային բնույթին, նպատակ չէր հետապնդում ստանալ «Հայաստան առանց հայերի»։ Այդպիսի քաղաքականությունը չէր համապատասխանի իր՝ ցարիզմի շահերին» (էջ 379)։ Այնուհետև հեղինակը հանգամանորեն ցույց է տալիս, թե ինչու նման քաղաքականությունը ձեռնտու չէր ցարիզմին։ Այս հարցի քննարկման ժամանակ ևս հեղինակի արտահայտած տեսակետները ճիշտ են, բերված փաստերը՝ համոզիչ։

Գրախոսվող աշխատության VI գլուխը նվիրված է Կովկասյան ռազմաճակատում գործող հայկական կամավորական ջոկատների և կանոնավոր զորքերի ստեղծմանն ու նրանց պայքարի լուսաբանմանը։ Հեղինակը նշում է, որ «ելնելով առաջին համաշխարհային պատերազմի բնույթի լենինյան գնահատականից, հայ բոլշևիկները բացասաբար էին վերաբերում ռուսական բանակի կազմում կամավորական ջոկատների ստեղծմանը։ Այդ միջոցառումը նրանք դիտում էին որպես աջակցություն ցարական կառավարությանը նրա նվաճողական քաղաքականության մեջ» (էջ 291)։ Հեղինակը ցույց է տալիս, որ բոլշևիկների կարծիքով թուրքական կառավարությունը կամավորական ջոկատների ստեղծումը կարող էր արևմտահայերի նկատմամբ դաժան հալածանքների առիթ դարձնել։

Հայկական կամավորական ջոկատները պայքարում էին ոչ թե ցարիզմի գաղութային ծրագրերի իրագործման, այլ թուրքական լծի տակ հեծող հայ բնակչության ազգային ազատագրության, նրա ֆիզիկական գոյության պաշտպանության համար։ Ընդգծելով այդ, հեղինակը շեշտում է, որ շարժումը գնահատելիս հարկ է նկատի ունենալ պատմական երևույթների ու դեպքերի բարդ հանգույցը. Ինչպես նշում Լին

բոլշևիկները, ցարիզմը ձգտում էր այդ պայքարն օգտագործել իր գաղութային նպատակների համար, իսկ թուրքերը, անհիմն կերպով, շարժումը դարձրին արևմտահայերի ֆիզիկական ոչնչացումն արդարացնելու պատրվակներից մեկը։

Գրքում մասնավորապես մեծ տեղ է տրված Անդրանիկի կամավորական ջոկատի մարտական գործողություններին ու ռուսական բանակի զեկավարների՝ Անդրանիկին տրված բարձր գնահատականներին (էջ 309—314)։ Հեղինակը ցույց է տալիս, որ չնայած բոլոր փորձերին, դաշնակցությանը փաստորեն չհաջողվեց իր ձեռքը վերցնել կամավորական շարժման ղեկավարությունը։

Պատմագիտական այս արժեքավոր ուսումնասիրությունը զերծ չէ նաև թերություններից։ Այսպես օրինակ, քիչ տեղ է տրված Կովկասյան ռազմաճակատում բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքի լուսաբանմանը, ինչպես նաև զինվորական սովետների գործունեությանը։ Աշխատության եզրակացությունը հանգամանալից չէ գրված։ Կան առանձին վրիպումներ և փաստական անճշտություններ։

Այդուհանդերձ՝ Աշոտ Հարությունյանի «Կովկասյան ռազմաճակատը 1914—1917 թթ.» աշխատությունը արժեքավոր ներդրում է մեր պատմական գիտության մեջ։ Ցանկալի է, որ հեղինակը պատրաստի նրա հայերեն հրատարակությունը։

Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր